ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆԻ ՄՈՏ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԳՈՐԾԱԿԱՐԳԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

Մասնակցությամբ՝

- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի Գլխավոր քարտուղար՝ Արամ Հովհաննիսյանի**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Բարսեղ Նիկողոսյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝ Մանվել Մելիքյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝ Անի Խաչատրյանի**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ՝ Տաթևիկ Մկրտչյանի**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. ՀՀ Արմավիրի մարզպետի մոտ 30.12.2024թ. կայացած գործակարգավարական խորհրդակցության ընթացքում մարզպետի կողմից տրված հանձնարարականների կատարման ընթացքի և մարզում առկա մի շարք հրատապ խնդիրների քննարկում

Քննարկվեցին՝

Հարց 1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում 2024 թվականի առաջին եռամսյակի ընթացքում իրականացված իրավական հսկողության աշխատանքների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում

/ Գոռ Հովհաննիսյան-
Հ Հ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
տարածքային կառավարման և տեղական
ինքնակառավարման հարցերի վարչության պետ /

Օրակարգային առաջին հարցի կապակցությամբ տեղեկատվությամբ հանդես եկած ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Գոռ Հովհաննիսյանը նշեց, որ ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ղեկավարի 2025 թվականի հունվարի 9–ի N 0016 գրության համաձայն 2024 թվականի առաջին եռամսյակում իրականացված իրավական հսկողության իրականացման ընթացքում հայտնաբերված խախտումներն ու թերությունները ամբողջությամբ վերացվել են: Նշված գրությունը և հիմքերը ՀՀ Արմավիրի մարզպետի 2025 թվականի հունվարի 9–ի N 01/13/00053–2025 գրությամբ ուղարկվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Ի դեպ, հայտնաբերված խախտումների և թերությունների մեծ մասը վերաբերել են քաղաքացիական պաշտպանության ոլորտին: Խախտումների և թերությունների վերացման հավաստիությունը ճշտելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Անդրանիկ Լալայանի հետ համատեղ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմում կամ Բաղրամյանի համայնքապետարանում համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատարի մասնակցությամբ կիրականացվի խախտումների և թերությունների ոչ միայն փաստաթղթային ձևակերպումների, այլև փաստացի վերացման աշխատանքների հավաստիությունը և արդյունքները կներկայացվի ՀՀ Արմավիրի մարզպետին:

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Գոռ Հովհաննիսյանը միաժամանակ նշեց, որ համանման գործընթացի մեջ է գտնվում նաև ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանը, որտեղ կատարված իրավական հսկողության արդյունքում հայտնաբերված խախտումներն ու թերությունները վերացնելու նպատակով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի հունվարի 8–ի N ԴԽ/293–2025 գրությամբ սահմանվել է նոր ժամկետ՝ մինչև 2025 թվականի փետրվարի 20–ը:

ՀՀ Արմավիրի մարզպետը ներկայացված տեղեկատվությունն ընդունելով ի գիտություն, միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ շուտով կլուծվի Փարաքար համայնքի ղեկավարի պաշտոնակատարի նշանակման խնդիրը, ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Գոռ Հովհաննիսյանին հանձնարարեց՝ համապատասխան աջակցություն ցուցաբերել Փարաքար համայնքի ղեկավարի նոր նշանակվելիք պաշտոնակատարին իրավական հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումներն ու թերությունները վերացնելու ուղղությամբ, հաշվի առնելով սկզբնական շրջանում նրա աշխատանքային ծանրաբեռնվածությունը և վերը նշված հանձնարարականի կատարման ժամկետի սղությունը:

Հարց 2. ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների և առողջապահական հիմնարկների շենք–շինությունների տեխնիկական իրական վիճակի ուսումնասիրման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին տեղեկատվության ներկայացում

/Դավիթ Ավետիսյան–ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի քաղաքաշինության,
հողաշինության և ենթակառուցվածքների

Օրակարգային երկրորդ հարցի կապակցությամբ տեղեկատվությամբ հանդես եկած ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Դավիթ Ավետիսյանը նշեց, որ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների և առողջապահական հիմարկների շենք–շինությունների տեխնիկական իրական վիճակի (տեխնիկական անձնագրերի) ուսումնասիրման կապակցությամբ դեռևս 2022 թվականին ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության աշխատակիցների մասնակցությամբ կատարվել է ակնադիտական ուսումնասիրություն թվով 72 դպրոցներում և աղյուսակի տեսքով կազմվել է եզրակացություն առկա խնդիրների վերաբերյալ: 2024 թվականին փոխվարչապետի գրասենյակի, Քաղաքաշինության կոմիտեի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ու մարզպետի աշխատակազմի ոլորտային մասնագետների մասնակցությամբ կրկնակի կատարվել է վերը նշված դպրոցներից 24-ում ուսունասիրություն 2025 թվականին իրականացվող վերանորոգվող դպրոցների ծրագրում ներառելու նպատակով:

Հարցի առնչությամբ մտքերի փոխանակման կարգով համապատասխան տեղեկատվություն ներկայացրեցին նաև ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Սոնյա Բուդաղյանը և առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ասթինե Ապիտոնյանը:

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Սոնյա Բուդաղյանը մասնավորապես նշեց, որ լիցենզավորված կազմակերպության միջոցով կատարված ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների շենք–շինությունների սեյսմիկ վիճակի հետ կապված ակնադիտական ուսումնասիրման արդյունքում բոլոր հանրակրթական դպրոցներն արդեն ունեն համապատասխան եզրակացություններ: Սակայն այդ եզրակացություններում արձանագրված առկա իրավիճակի վերաբերյալ տվյալների արժանահավատությունը ներկա պահին քիչ հավանական է թվում, քանի որ այն կատարվել է ոչ գործիքային դիտարկմամբ:

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ասթինե Ապիտոնյանը նշեց, որ <<Արմավիրի բժշկական կենտրոն>> ՓԲԸ–ի պոլիկլինիկայի մասնաշենքը, որը 1996 թվականից ի վեր չի վերանորոգվել, մինչև նոր շենքի կառուցումը, գործող շենքը կվերանորոգվի: <<Արմավիրի բժշկական կենտրոն>> ՓԲԸ–ի շենքը վերանորոգվել է 2019 թվականին և ներկայումս միայն կոսմետիկ վերանորոգման կարիք ունի: <<Մեծամորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ–ի շենքը 1978 թվականին կառուցվելուց հետո երբևիցե չի վերանորոգվել, իսկ նրա պոլիկլինիկայի մասնաշենքը միայն ենթարկվել է կոսմետիկ վերանորոգման: 2010 թվականին կառուցված <<Հիսուսի մանուկներ>> առողջության կենտրոնի շենքային պայմաններն ու շենքի տեխնիկական վիճակը լավ են և ընթացիկ կոսմետիկ վերանորոգումները կատարվում են առողջության կենտրոնի միջոցների հաշվին: <<Էջմիածնի բժշկական կենտրոն>> ՓԲԸ–ում առկա է շենք–շինությունների տեխնիկական և սեյսմիկ իրական վիճակի վերաբերյալ համապատասխան եզրակացություններ, իսկ նոր շենքի /մասնավորապես պոլիկլինիկայի և ծննդատան մասնաշենքերի/ կառուցման նախագիծը ներկայումս գտնվում է քննարկման փուլում:

ՀՀ Արմավիրի մարզպետը ներկայացված տեղեկատվություններն ընդունեց ի գիտություն և ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Դավիթ Ավետիսյանին հանձնարարարեց՝ հարցի հետագա քննարկումը կազմակերպել 2025 թվականին իրականացվելիք շինարարական ծրագրերում նշված դպրոցներն ընդգրկվելուց և վերջնական ցանկը ճշգրտելուց հետո:

Հարց 3. ՀՀ վարչապետի մոտ 2025 թվականի ընթացքում նախատեսվող ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի 2024 թվականի հաշվետվության ներկայացման շրջանակներում ՀՀ Արմավիրի մարզպետի հաշվետու զեկույցի սահիկաշարի ձևաչափով և N 1 ձևաչափ-տեղեկանքի կազմման և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացման աշխատանքների կազմակերպման մասին

/Արամ Հովհաննիսյան–ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի գլխավոր քարտուղար /

Օրակարգային երրորդ հարցի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանը նշեց, որ համաձայն ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2025 թվականի հունվարի 8-ի N 02/12.63/349-2025 հանձնարարականի, ՀՀ վարչապետի մոտ 2025 թվականի ընթացքում նախատեսվում են ՀՀ մարզպետերի աշխատակազմերի 2024 թվականի հաշվետվությունների ներկայացում:

Ըստ այդմ, հաշվետու զեկուցմամբ անհրաժեշտ է ՀՀ վարչապետին ներկայացնել՝

1. ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված ծրագրի որպես համակատարողներ մարզպետերին վերաբերելի միջոցառումների, ինչպես նաև մարզպետի աշխատակազմի տարեկան աշխատանքային ծրագրով նախատեսված նպատակային միջոցառումների կատարման ընթացքը և արդյունքները (2024 թվականից).
2. բյուջեի ընթացիկ կատարողականը տոկոսով և խոշորացված պատկերը.
3. ընթացիկ և առաջիկա ծրագրերը (այդ թվում՝ նախաձեռնությունները և նախագծերը), արդյունքներն ու խնդիրները.
4. մարզում իրականացված սուբվենցիոն ծրագրերի կատարողականը՝ 2018 թվականից ի վեր՝ ներկայացնելով հայտերի ընդհանուր թիվը, հաստատված ծրագրերի ընդհանուր թիվը, գումարային չափը, որում արտահայտված կլինեն պետության, համայնքի և մասնավորի մասնակցության չափերը, ինչպես նաև դրանց արդյունքային ցուցանիշները (օրինակ՝ վերանորոգվել, հիմնանորոգվել կամ կառուցվել է x կմ ճանապարհ կամ գազատար կամ ջրագիծ, ինչպես նաև կառուցվել կամ նորոգվել է x քանակությամբ մանկապարտեզ, մշակութային հաստատություն և այլն).
5. մարզի տարածքում «Տարածքային կառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածով սահմանված համապատասխան բնագավառներում իրականացվող ոլորտային ծրագրերի կատարման ընթացքն ու արդյունքները՝ հակիրճ և բովանդակային.
6. հակիրճ տեղեկատվություն մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեության արդյունքների վերաբերյալ:

Այդպիսով, հաշվետու զեկույցը պետք է ներկայացնել սեղմ ու բովանդակալից սահիկաշարի ձևաչափով (սահիկաշարը վերնագրված լինի որպես հաշվետվություն, բոլոր էջերի պարտադիր համարակալմամբ, ընթեռնելի տառաչափով ներկայացված պարզ և կարճ նախադասություններով)՝ կառուցվածքային առումով ներառելով ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի որպես համակատարողներ մարզպետերին վերաբերելի ծրագրերի, ինչպես նաև մարզպետի աշխատակազմի տարեկան աշխատանքային ծրագրով նախատեսված նպատակային միջոցառումների կատարողականը, 2024 թվականի ընթացիկ ժամանակահատվածի ՀՀ պետական բյուջեի կատարողականը, ընթացիկ և առաջիկա ծրագրերը, ձեռքբերումները, ինչպես նաև ոլորտային այլ ծրագրերի

կատարման ընթացքն ու արդյունքները (ներառելով վերոնշյալ կետերը): Սահիկաշարը կազմելիս խնդրում եմ առաջնորդվել նաև կից տեղեկանքում ամրագրված սկզբունքներով:

Մինչև Վարչապետին հաշվետվությունների ներկայացումը՝ անհրաժեշտ է ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով որպես համակատարողներ մարզպետերի համար սահմանված 2024 թվականի միջոցառումների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ տեղեկանք՝ կից N 1 ձևաչափ-տեղեկանքին համապատասխան, նշելով նաև չկատարված միջոցառումների (ծրագրերի)՝ սահմանված ժամկետում կատարման անհնարինության պատճառները՝ համապատասխան հիմնավորումներով ու փաստարկներով:

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանը միաժամանակ նշեց, որ ՀՀ վարչապետի հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով 2025 թվականի հունվարի 9–ին ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ է ստացվել նաև Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի N ԴԽ/15.2/537-2025 գրությունը, համաձայն որի պահանջվող տեղեկատվության ներկայացման ժամկետ է սահմանվել 2025 թվականի հունվարի 27–ը:

Մտքերի փոխանակման կարգով սահիկաշարի կազմման աշխատանքների վերաբերյալ իրենց մոտեցումները ներկայացրեցին նաև սահիկաշարը կազմողներ՝ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանը և անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Տաթևիկ Մկրտչյանը:

Հանձնարարական՝

1. ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝

ա/ նախապատրաստել և 2025 թվականի հունվարի 20–ին կայանալիք գործակարգավարական խորհրդակցության ընթացքում ՀՀ Արմավիրի մարզպետին ներկայացնել իրենց ղեկավարած կառուցվածքային ստորաբաժանման կողմից 2024 թվականին կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները, հաշվետվության ներկայացման գործընթացին մասնակից դարձնել նաև կառուցվածքային տվյալ ստորաբաժանման աշխատակիցներին, ովքեր համապատասխանաբար պետք է ներկայացնեն իրենց կատարած աշխատանքները:

բ/ սերտորեն համագործակցելով ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանի և անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Տաթևիկ Մկրտչյանի հետ՝ ապահովել ՀՀ վարչապետի մոտ 2025 թվականի ընթացքում նախատեսվող ՀՀ մարզպետերի աշխատակազմերի 2024 թվականի հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2025 թվականի հունվարի 8-ի N 02/12.63/349-2025 հանձնարարականի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի հունվարի 9-ի N ԴԽ/15.2/537-2025 գրության պահանջների ամբողջական կատարումը:

2. ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանին և անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Տաթևիկ Մկրտչյանին՝ համապատասխան ձևաչափով մշակված սահիկաշարի

և N 1 ձևաչափ-տեղեկանքի նախնական տարբերակը 2025 թվականի հունվարի 20–ին ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի քննարկմանը:

3. ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանին՝ համապատասխան ձևաչափով մշակված սահիկաշարի և N 1 ձևաչափ-տեղեկանքի վերջնական տարբերակը ՀՀ վարչապետի աշխատակազմ և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել 2025 թվականի հունվարի 24–ին:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանին:

Օրակարգային հարցերի քննարկումից հետո ՀՀ Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը մի շարք կարևոր հարցերի անդրադառնալու անհրաժեշտությունից ելնելով, ներքոհիշյալ հանձնարարականները տվեց՝

- **ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Անդրանիկ Լալայանին՝ նախապատրաստել 2025 թվականի ընթացքում մարզի զորակոչային, զորահավաքային նախապատրաստության, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում պլանավորված միջոցառումների մասին տեղեկատվություն և այն ներկայացնել 2025 թվականի հունվարի 20–ին կայանալիք գործակարգավարական խորհրդակցության ժամանակ:**
- **ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արթուր Այվազյանին՝ նախապես պայմանավորվելով ՀՀ Էկոնոմիկայի նախարարության համապատասխան մասնագետների և ըստ ընտրության մարզի համայնքների ղեկավարների հետ, մարզի ազգաբնակչության շրջանում մարզի գյուղատնտեսության ոլորտում իրականացվելիք և շահառուներ ընդգրկող պետական աջակցության ծրագրերի պատշաճ իրազեկումն ապահովելու նպատակով ընթացիկ տարում փնջային կարգով համայնքներում համատեղ կազմակերպել հանդիպումներ և արդյունքները ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին:**

Օրակարգային հարցերի քննարկմամբ և ամփոփմամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

2025-01-17 09:37:45 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության պետ՝ Դավիթ Դավթյան